Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/33895/02/23

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«23» հոկտեմբերի 2023 թվական **քաղաք Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ժ.Ասատրյանս, ծանոթանալով «ԻՋԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԻՏՇԻՆ» բաց բաժնետիրական ընկերության ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 20-ի որոշումը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու» պահանջի մասին հայցադիմումին,

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) հայցադիմումն ստացվել է և դատավոր Ս.Խաչատրյանին մակագրվել 13.10.2023 թվականին:

Դատավոր Ս.Խաչատրյանի ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու հիմքով հայցադիմումը 18.10.2023 թվականին մակագրվել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ժ.Ասատրյանին, իսկ դատավորի աշխատակազմին հանձնվել է 19.10.2023 թվականին (հիմք՝ գործի կարգագիրը):

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ, 121-րդ, 122-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր առկա չեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը,

որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, *այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված* լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

Դատարանը գտնում է, որ «ԻՋԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԻՏՇԻՆ» բաց բաժնետիրական ընկերության ներկայացրած հայցադիմումը պետք է ընդունել վարույթ, միաժամանակ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բոլոր ապացույցները՝ տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող:

Միևնույն ժամանակ Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատասխանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանը կարող է ներկայացնել տվյալ գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի, 199-րդ, 200-րդ և 361-րդ հոդվածներով և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԻՋԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԻՏՇԻՆ» բաց բաժնետիրական ընկերության ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 20-ի որոշումը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու» պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «ՀՀԳՄՎՀ-ԲՄԱՇՁԲ-23/55» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանն իրավունք ունի հայցադիմումի պատասխան ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Ժ. ԱՍԱՏՐՅԱՆ